«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ

Դ.Ռ.ԳԱԼՈՅԱՆ

«25» ապրիլի 2020թ

Կ Ա Ր Ծ Ի Ք

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Վահան Սամվելի Գարաքյանի «Ֆինանսական աուդիտի կազմակերպման հիմնախնդիրները արտադրական ձեռնարկություններում (ԼՂՀ օրինակով)» թեմայով, Ը.00.03–«Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցմանը ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը քննարկվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ֆինանսներ» ամբոնի նիստում: Նիստին ներկա էին՝ Ֆինանսներ» ամբիոնի վարիչ, տ.գ.դ պրոֆեսոր Ա.Բ.Սալնազարյանը (նախագահող), տ.գ.դ., պրոֆեսոր Ա.Մաթևոսյանը, տ.գ.թ., դոցենտ Է.Աղաբեկյանը, տ.գ.թ., դոցենտ Վ.Մուրադյանը, տ.գ.թ., դոցենտ Կ.Միքայելյանը, տ.գ.թ., դոցենտ Վ.Բաղդասարյանը, տ.գ.թ., դոցենտ Ա.Մհերյանը, տ.գ.թ., դոցենտ Ա.Սչանյանը, տ.գ.թ., դոցենտ Ա.Ժամկոչյանը, տ.գ.թ., դոցենտ Մ.Գյուլասարյանը, տ.գ.թ., դոցենտ Ա.Ներսիսյանը, տ.գ.թ., ասիստենտ Վ.Գևորգյանը, տ.գ.թ.,ասիստենտ Մ.Խաչատրյանը, տ.գ.թ.,ասիստենտ Ն.Սուղյանը, տ.գ.թ.,ասիստենտ Մ.Ասլանյանը (գրախոսող), տ.գ.թ.,ասիստենտ Լ.Հարությունյանը, տ.գ.թ.,ասիստենտ Լ.Հովականյանը, տ.գ.թ.,ասիստենտ Վ.Երանոսյանը, տ.գ.թ.,ասիստենտ Օ.Փափազյանը (գրախոսող), տ.գ.թ.,ասիստենտ Գ.Առաքելյանը, տ.գ.թ.,ասիստենտ Խ.Իգիթյանը ասիստենտներ Հ.Սալնազարյանը, Ն.Բալասանյանը, Ա.Խալաթյանը, ամբիոնի ավագ լաբորանտ Հ.Սաֆարյանը, լաբորանտ Ռ.Բուդաղյանը, ինչպես նաև ասպիրանտներ և հայցորդներ:

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Տնտեսության դեմոկրատականացման և ազատ մրցակցության ապահովման արդի պայմաններում տնտեսահարաբերությունների կարգավորման ոչ պետական կառուցակարգերից և գործիքներից մեկն էլ աուդիտորական կազմակերպություններն են՝ իրենց կարևորագույն գործունեությամբ: Աուդիտորական գործունեությունը սկիզբ է առել մարդկային հասարակության զարգացման ամենավաղ շրջաններից, սակայն լայնամասշտաբ զարգացում է ապրել վերջին տասնամյակներում:

Ներկայումս, ինչպես Արևմտյան Եվրոպայի, ԱՄՆ, ՌԴ կազմակերպություններում, այնպես էլ Հայաստանում աուդիտորական գործունեությունն իրականացվում է անկախ աուդիտորական կազմակերպությունների միջոցով՝ աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Ժամանակակից աուդիտն անցել է աստիճանական զարգացման հետևյալ փուլերը՝ հաստատողական, վերահսկողական և խորհրդատվական: Վերջին տասնամյակների ընթացքում աուդիտորական կազմակերպություններն իրենց հիմնական ուշադրությունը կենտրոնացնում են խորհրդատվական ծառայությունների մատուցման վրա: Հետևաբար, ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նպատակն է աուդիտորին հնարավորություն տալ կարծիք արտահայտելու այն մասին, թե արդյոք դրանք բոլոր էական առումներով կազմված են գործող օրենսդրությանը համապատասխան:

Ինչպես ՀՀ-ում, այնպես էլ Արցախի Հանրապետությունում աուդիտի ինստիտուտը գործունեության երկարտև փորձ դեռևս չունի: Մասնավորապես այն Արցախում ներդրվել է սկսած 2012 թվականից, այդուհանդերձ ներկայումս աշխատանքներ են տարվում աուդիտորական գործունեության կազմակերպման և կարգավորման ոլորտում բարեփոխումների իրականացման ուղղությամբ՝ կապված հանրապետությունում անկախ աուդիտորական դաշտի ձևավորման, հետագա կայացման, աուդիտորների մասնագիտական պատրաստվածության ապահովման և համապատասխան օրենսդրական հիմքերի մշակման ու ներդրման հետ:

Սույն ատենախոսությունում աուդիտորական գործունեության աստիճանական բարելավման և որակի ապահովման հիմնահարցերը քննարկվում են Արցախում հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության ձևավորված մակարդակի վերլուծության և գնահատման ու առկա խնդիրների բացահայտման մոտեցումներով՝ հաշվի առնելով ՀՀ-ի հետ ընդհանուր տնտեսական դաշտի և հաշվառման համակարգերի ներդաշնակության ու փոխգործակցության ապահովման անհրաժեշտությունը: Իսկ առաջարկված մոտեցումները հիմնված են հանրապետության տնտեսության մեջ վերջին տարիներին ձևավորված իրավիճակի բազմակողմանի վերլուծության արդյունքում բացահայտված միտումների գնահատման վրա:

Չնայած այդ ամենին Արցախի Հանրապետությունում աուդիտորական ծառայությունների շուկան, ինչպես նաև աուդիտի որակի ապահովման համակարգը, գտնվում են ձևավորման ու կայացման փուլում և օբյեկտիվորեն պահանջում են գիտականորեն հիմնավորված համապատասխան մեթոդական մոտեցումների առաջադրում և դրանց շարունակական կատարելագործում, ինչն էլ պայմանավորում է այս հետազոտության հրատապությունն ու արդիականությունը:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը, ստացված արդյունքների հավաստիությունը, գիտական նորույթը և կիրառական նշանակությունը

Ատենախոսությունում հետազոտության նպատակը ձևակերպված է հստակ՝ տնտեսական բարեփոխումների արդի պայմաններում աուդիտորական գործունեության որակի ապահովմանն ուղղված մոտեցումների և առաջարկությունների մշակում, որին հասնելու համար աշխատանքում առաջադրվել է խնդիրների համահունչ շրջանակ:

Ատենախոսությունում որպես հետազոտության օբյեկտ ներկայացվել է Արցախի Հանրապետության արտադրական կազմակերպություններում ֆինանսական աուդիտի իրականացման գործընթացը, իսկ որպես առարկա՝ աուդիտորական գործունեության, աուդիտի արդյունավետության բարձրացման հիմնախնդիրների ամբողջությունը:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Ներածության մեջ հիմնավորվել է թեմայի արդիականությունը, հետազոտության նպատակը և խնդիրները, օբյեկտը և առարկան, ներկայացվել են աշխատանքի հիմնական գիտական արդյունքները և նորույթը, դրանց տեսական ու գործնական նշանակությունը, տեղեկատվական ու մեթոդական հիմքերը:

Ատենախոսության առաջին՝ «Ֆինանսական աուդիտի դերը ժամանակակից տնտեսական համակարգերում» գլխում ներկայացվել է աուդիտի նպատակը, և վեր են հանվել աուդիտի իրականացման խնդիրները: Ուսումնասիրվել են նաև աուդիտորական գործունեության և աուդիտի իրականացման միջազգային փորձը, ինչպես նաև դրա կարգավորման իրավական հիմքերը:

Աշխատանքի այս գլխում առանձին դիտարկված են Արցախի կազմակերպություններում հաշվապահական հաշվառման վարման ներկա վիճակը և տնտեսավարող սուբյեկտների կողմից իրականացվող հաշվետվողականության սկզբունքները: Բացի այդ, աուդիտի իրականացման ընթացքում դրսևորվող բացասական երևույթները բացառելու նպատակով հեղինակն առաջարկում է բացահայտել տվյալ բնագավառում առկա հիմնախնդիրները և մշակել դրանց լուծման համապատասխան մոտեցումներ:

Ատենախոսության «Աուդիտի կազմակերպման հիմնախնդիրները Արցախի Հանրապետության արտադրական կազմակերպություններում»՝ երկրորդ գլխում վեր են հանվել արտադրական կազմակերպություններում ֆինանսական աուդիտի իրականացման առանձնահատկությունները, ինչպես նաև պաշարների ստուգման համար կիրառվող մոտեցումներն ու պատրաստի արտադրանքի ինքնարժեքի ձևավորման արժևորման գործընթացում կիրառվող մեթոդաբանության խնդիրները:

Ատենախոսությունում իրականացված վերլուծությունները ցույց են տալիս, որ ԱՀ արտադրական կազմակերպություններում վարվող հաշվապահական հաշվառման՝ մասնավորապես ապրանքանյութական արժեքների հաշվառման, ֆինանսական հաշվետվություններում դրանց արտացոլման գործընթացներում թերևս ամենախոցելի կողմերից

են սահմանված հաշվառման քաղաքականության անհամապատասխանությունը և գործող իրավական նորմերից ու ստանդարտներից շեղումները:

Ատենախոսության երրորդ՝ «Արցախի Հանրապետության արտադրական կազմակերպություններում աուդիտի կատարելագործման ուղիները» գլխում մշակվել են հանրապետությունում աուդիտորական գործունեության զարգացման և արտադրական կազմակերպություններում աուդիտի կազմակերպման կատարելագործման համար անհրաժեշտ միջոցառումներ, մեխանիզմներ և մոտեցումներ:

Ատենախոսության կարևոր արժանիքներից մեկն այն է, որ առաջադրված խնդիրների լուծման ընթացքում հեղինակն ստացել է մի շարք գիտական արդյունքներ և որոնցից որպես նորույթ առանձնացնում է հետևյալները.

ա/ առաջարկվել է պաշարների աուդիտի ընթացակարգերի հաջորդականություն և կիրառելի փաստաթղթերի շրջանակներ, որով առաջնորդվելու դեպքում, ապրանքանյութական արժեքների աուդիտ իրականացնելիս, կհավաքագրվի բավականաչափ և ամբողջական տեղեկատվություն կարծիքի ձևավորման համար,

բ/ առաջարկվել է արտադրապրոցեսում պատրաստի արտադրանքի արտադրության նպատակով կատարվող ծախսումների բաշխման արժևորումը գնահատելու համար հավաստիություն (ապացույցներ) ձեռք բերելու միջոցառումների իրականացման մեթոդական մոտեցումներ՝ կաթնամթերքի արտադրության օրինակով,

գ/ աուդիտի իրականացման գործընթացում աուդիտորական ընկերություններին մասնագիտական աջակցություն ցուցաբերելու և ընթացիկ հսկողություն իրականացնելու նպատակով առաջարկվել է ԱՀ-ում ձևավորել լայն լիազորություններով օժտված աուդիտորական անկախ մասնագիտական կառույց (ներկայացուցչություն), որն իր գործունեությամբ կնպաստի աուդիտի կազմակերպման արդյունավետության բարձացմանը, ինչպես նաև հսկողական գործառույթների իրականացմամբ՝ աուդիտորական ռիսկի զսպմանը:

Ատենախոսության կարևոր առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ ստացված արդյունքներն ունեն տեսամեթոդական և գործնական նշանակություն:

Մասնավորապես դրանք կարող են օգտագործվել Արցախի Հանրապետության արտադրական կազմակերպություններում ֆինանսական աուդիտի կատարելագործման, այդ գործընթացում ժամանակակից մեխանիզմների, գործիքների ներդրմանն ուղղված ուսումնասիրություններում և գործնական ծրագրերում, ինչպես նաև տվյալ ոլորտի մասնագետների ու աշխատակիցների կողմից:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Գրախոսվող ատենախոսությունն իր դրական արժանիքներով հանդերձ ունի նաև որոշակի թերություններ, որոնցից կցանկանայինք առանձնացնել հետևյալները.

1. Ատենախոսության ներածությունում հստակ ձևակերպում չի ստացել հետազոտության օբյեկտը՝ այն նշվում է որպես ,, ... աուդիտի իրականացման գործընթաց,,: Մինչդեռ, մեր կարծիքով, հետազոտության օբյեկտը պետք է լինի իրական և իր մեջ պարունակի հետազոտության առարկան, այսինքն հետազոտվող հիմնախնդիրները:

2. Նորույթի առաջին կետում հեղինակի կողմից առաջարկվել է պաշարների աուդիտի ընթացակարգերի հաջորդականություն և կիրառելի փաստաթղթերի շրջանակներ: Հետազոտությունը կշահեր, եթե աուդիտի այդ ընթացակարգերի հաջորդականությունը և կիրառելի փաստաթղթերի շրջանակները ներկայացվեին աուդիտորական գործունեությունում ներկայումս կիրառվող ընթացակարգերի և փաստաթղթերի հետ համեմատության մեջ: Ինչը հնարավորություն կատար առվել հստակ ընդգծել առաջարկի առավելությունները, ինչպես նաև հնարավոր կլիներ հստակ արձանագրել, որ նախկինում նման ընթացակարգեր չեն կիրառվել կամ կիրառվել են ավելի պակաս արդյունավետությամբ:

3. Նորույթի 3-րդ կետի համաձայն հեղինակն առաջարկում է ձևավորել լայն լիազորություններով օժտված աուդիտորական անկախ մասնագիտական կառույց (ներկայացուցչություն), որն իր գործունեությամբ կիրականցնի ընթացիկ վերահսկողություն: Նման

առաջարկը, կարծում ենք, առավել նպատակահարմար կլիներ իրականացնել աուդիտորական գործունեության ռիսկերի առաջացման և ձախողումների փաստացի օրինակների բացահայտումների և հիմնավորումների հիմքի վրա, եթե այդպիսիք կան: Հակառակ դեպքում, նման առաջարկը ոլորտի ընկերությունների համար լրացուցիչ բեռ և սահմանափակում է իրականացվող գործունեության համար, մասնավորապես, եթե հաշվի առնենք, որ այդ ոլորտի լիցենզավորումը և մասնագետների որակավորումը նույնպես ուղղված են աուդիտորական գործունեության ռիսկերի զսպմանը:

4. Հետազոտությունն ավելի կշահեր, եթե հեղինակի կողմից փաստացի ուսումնասիրվեին և առաջարկվեին այնպիսի տնտեսական խթաներ, որոնք կարող էին մեծացնել տնտեսավարող անձանց կողմից աուդիտորական ծառայությունների նկատմամբ պահանջարկը: Մասնավորապես դրանք կարող են լինել հարակային վերահսկողության առավել մեղմ ռեժիմի կիրառման կամ բանկային վարկերից օգտվելու պարզեցված ընթացակարգերի կիրառման կառուցակարգերը և այլն :

5. Ատենախոսությունում և սեղմագրում առկա են նաև տեխնիկական բնույթի թերացումներ և անհամապատասխանություններ:

Եզրակացություն

Վերը նշված դիտողությունները սկզբունքորեն չեն նսեմացնում ատենախոսության արժանիքները և արդյունքները:

Վահան Սամվելի Գարաքյանի ատենախոսությունն ինքնուրույն ու ամբողջական, գիտական բարձր մակարդակով կատարված հետազոտություն է, իսկ արված առաջարկությունները կարող են էական դեր ունենալ Արցախի Հանրապետության արտադրական կազմակերպություններում ֆինանսական աուդիտի կատարելագործման, այդ գործընթացում ժամանակակից մեխանիզմների, գործիքների ներդրմանն ուղղված ուսումնասիրություններում և գործնական ծրագրերի իրականացման գործում:

Հետազոտության հիմնական արդյունքներն արտացոլված են ատենախոսության սեղմագրում և հեղինակի հրատարակած գիտական հոդվածներում:

Վահան Սամվելի Գարաքյանի «Ֆինանսական աուդիտի կազմակերպման հիմնախնդիրները արտադրական ձեռնարկություններում (ԼՂՀ օրինակով)» թեմայով, ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ:

Առաջատար կազմակերպության կարծիքը քննարկվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ֆինանսներ» ամբիոնի նիստում 25.04.2020թ. (արձանագրություն թիվ 12):

ՀՊՏՀ «Ֆինանսներ» ամբիոնի վարիչ,
տ.գ.դ., պրոֆեսոր՝ Ա.Բ.Սալնազարյան

ամբիոնի ասիստենտ, տ.գ.թ.՝ Մ.Ս.Ասլանյան

ամբիոնի ասիստենտ, տ.գ.թ.՝ Օ.Ռ.Փափազյան

Ա.Բ. Սալնազարյանի, Մ.Ս.Ասլանյանի և Օ.Ռ.Փափազյանի ստորագրությունները հաստատում եմ՝

ՀՊՏՀ գիտքարտուղար՝ Ն.Հ.Դարբինյան

25.04.2020